ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.12.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/81

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «Խաչպար» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ս. Բալասանյանի

Քննելով ՀՀ ազգային անվտանգության ծառայության կարիքների համար ատամնաբուժական նյութերի և ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԱԱԾ-ՌԲՎ-ԳՀԱՊՁԲ-20/1-ՍՏՈՄ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 06.12.2019թ. ներկայացված և 06.12.2019թ. վարույթ ընդունված բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/81 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «Խաչպար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Խաչպար» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 06.12.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

ՀՀ ԱԱԾ-ն «Ատամնաբուժական նյութերի և ապրանքների» ձեռքբերման նպատակով հայտարարություն է հրապարակել «ՀՀ ԱԱԾ-ՌԲՎ-ԳՀԱՊՁԲ-20/1-ՍՏՈՄ» ծածկագրով

գնանշման հարցման մասին, որը հաստատվել է գնահատող հանձնաժողովի 2019թ. դեկտեմբերի 3-ի թիվ 1 որոշմամբ:

Համաձայն 2019թ. «դեկտեմբերի 2-ից ուժի մեջ մտած ՀՀ կառավարության թիվ 1422-Ն որոշման 9)-րդ կետով նոր խմբագրությամբ շարադրված 32-րդ կետի 2-րդ մասով սահմանված պահանջների՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ԱԱՀ բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով՝ թվերով և տառերով արտահայտված:

«ՀՀ ԱԱԾ-ՌԲՎ-ԳՀԱՊՁԲ-20/1-ՍՏՈՄ» ծածկագրով գնանշման հարցման Հրավերի հրահանգ գնանշման հարցման հայտը պատրաստելու վերաբերվող ՄԱՍ II-ում Հավելված 2 գնային առաջարկը կազմված է միչև 2019թ. դեկտեմբերի 2-ը գործող հին պահանջներով և չի համապատասխանում 2019թ. դեկտեմբերի 2-ին ուժի մեջ մտած նոր պահանջներին (կից փաստաթուղթ թիվ 2, էջեր՝ 1-4):

Ընկերությունը հայտնել է, որ «Խաչպար» ՍՊԸ-ն՝ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 46-րդ հոդվածի 1-ին մասով և 3-րդ մասի 1-ին կետով, բողոքարկում է ՀՀ ԱԱԾ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) «ՀՀ ԱԱԾ-ՌԲՎ-ԳՀԱՊՁԲ-20/1-ՍՏՈՄ» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի 2019թ. դեկտեմբերի 3-ի թիվ 1 որոշմամբ հաստատված՝ ատամնաբուժական նյութերի և ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԱԱԾ-ՌԲՎ-ԳՀԱՊՁԲ-20/1-ՍՏՈՄ» ծածկագրով գնանշման հարցման Հրավերի ընթացակարգը և դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրում է ղեկավարվել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով և ընդունել որոշում, որը կպարտավորեցնի ՀՀ ԱԱԾ-ի «ՀՀ ԱԱԾ-ՌԲՎ-ԳՀԱՊՁԲ-20/1-ՍՏՈՄ» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին՝ ընդունելու որոշում՝ «ՀՀ ԱԱԾ-ՌԲՎ-ԳՀԱՊՁԲ-20/1-ՍՏՈՄ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին:

Ընկերությունը հայտնել է, որ ներկայացված փաստաթղթերը փաստում են, որ Պատվիրատուի կողմից 2019թ. դեկտեմբերի 3-ին նման ձևով Հրավերի կազմումը չի համապատասխանում 2019թ. դեկտեմբերի 2-ից ուժի մեջ մտած ՀՀ կառավարության թիվ 1422-Ն որոշման 9)-րդ կետով նոր խմբագրությամբ շարադրված 32-րդ կետի 2-րդ մասով սահմանված պահանջներին:

Ի լրումն բողոքի Ընկերությունը հայտնել է, որ բողոքի պահանջում Ընկերության կողմից կատարվել է փոփոխություն և խնդրել է որպես բողոքի պահանջ պարտավորեցնել

Պատվիրատուի «ՀՀ ԱԱԾ-ՌԲՎ-ԳՀԱՊՁԲ-20/1-ՍՏՈՄ» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում «ՀՀ ԱԱԾ-ՌԲՎ-ԳՀԱՊՁԲ-20/1-ՍՏՈՄ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգում փոփոխություն կատարելու համար:

Ընկերության տնօրենը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 13.12.2019թ. ժամը 10:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր մասնակցությունը, ով պնդել է բողոքը:

3. ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալ.

««ՀՀ ԱԱԾ-ՌԲՎ-ԳՀԱՊՁԲ-20/1-ՍՏՈՄ» ծածկագրով ընթացակարգի գնումների պլանը հաստատվել է https://armeps.am/ppcm կայքում 01.11.2019թ. 211204 հերթական համարով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ 04.11.2019թ. հրապարակվել է procurement.am կայքում, գնման ընթացակարգը հայտարարվել է 03.12.2019թ., իսկ հայտերի ներկայացման վերջնաժամկետը սահմանվել է 2019 թվականի դեկտեմբերի 11-ի ժամը 10:00-ն:

Պատվիրատուն հայտնել է, որ ՀՀ կառավարության 10 հոկտեմբերի 2019 թվականի թիվ 1422-Ն որոշումն ուժի մեջ է մտել 02.11.2019թ.՝ գնումների պլանը հաստատվելուց հետո և որոշման 2-րդ կետի համաձայն որոշման պահանջները չեն տարածվում մինչև որոշումն ուժի մեջ մտնելը սկսած և դեռևս չավարտված գնման գործընթացների, ինչպես նաև կնքված և գործող պայմանագրերի վրա»:

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 13.12.2019թ. ժամը 10:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ԳԲՔԱ-ՆԳ-2019/81 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲՔԱ-ՆԳ-2019/81 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ ազգային անվտանգության ծառայության կարիքների համար ատամնաբուժական նյութերի և ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԱԱԾ-ՌԲՎ-ԳՀԱՊՁԲ-20/1-ՍՏՈՄ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու՝ Ընթացակարգ):

2. ՀՀ ազգային անվտանգության ծառայության 2019-2020թթ. գնումների պլանը, որը ներառում է «ՀՀ ԱԱԾ-ՌԲՎ-ԳՀԱՊՁԲ-20/1-ՍՏՈՄ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնման առարկա հանդիսացող ապրանքները, www.procurement.am (www.gnumner.am) կայքում հրապարակվել է ***04.11.2019թ.:***

3. ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն **որոշման** մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և ՀՀ կառավարության 2017 թվականի նոյեմբերի 16-ի 1454-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին ՀՀ կառավարության 10.10.2019թ. թիվ 1422-Ն որոշումն ուժի մեջ է մտել ***02.11.2019թ.:***

4. ՀՀ կառավարության 10.10.2019թ. թիվ 1422-Ն որոշման 2-րդ կետի համաձայն՝ սույն որոշման պահանջները չեն տարածվում մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը սկսած և դեռևս չավարտված գնման գործընթացների, ինչպես նաև կնքված և գործող պայմանագրերի վրա:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Խաչպար» ՍՊԸ-ի 06.12.2019թ. բողոքը և ի լրումն բողոքի գրությունը, ՀՀ ազգային անվտանգության ծառայության 10.12.2019թ. թիվ 20/1098 գրությունը, «ՀՀ ԱԱԾ-ՌԲՎ-ԳՀԱՊՁԲ-20/1-ՍՏՈՄ» ծածկագրով ընթացակարգի հրավերը, ՀՀ ազգային անվտանգության ծառայության 2019-2020թթ. գնումների պլանը, գործով առկա նյութերը, գտնում եմ, որ «Խաչպար» ՍՊԸ-ի 06.12.2019թ. բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 16-րդ կետի համաձայն՝ **գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում:** ***Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում***

հաստատված կամ փոփոխված <u>գնումների պլանի հրապարակման օրն</u> է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

Կարգի 17-րդ կետի համաձայն՝ **<u>գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է</u>:**

Այսպիսով, ՀՀ ազգային անվտանգության ծառայության կարիքների համար ատամնաբուժական նյութերի և ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԱԱԾ-ՌԲՎ-ԳՀԱՊՁԲ-20/1-ՍՏՈՄ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

ՀՀ ազգային անվտանգության ծառայության 2019-2020թթ. գնումների պլանը, որը ներառում է «ՀՀ ԱԱԾ-ՌԲՎ-ԳՀԱՊՁԲ-20/1-ՍՏՈՄ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնման առարկա հանդիսացող ապրանքները, www.procurement.am (www.gnumner.am) կայքում հրապարակվել է ***<u>04.11.2019թ.,</u>*** այսինքն «ՀՀ ԱԱԾ-ՌԲՎ-ԳՀԱՊՁԲ-20/1-ՍՏՈՄ» ծածկագրով գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը առաջացել է 04.11.2019թ.:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և ՀՀ կառավարության 2017 թվականի նոյեմբերի 16-ի 1454-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին ՀՀ կառավարության 10.10.2019թ. թիվ 1422-Ն որոշումն ուժի մեջ է մտել ***<u>02.11.2019թ.:</u>***

ՀՀ կառավարության 10.10.2019թ. թիվ 1422-Ն որոշման 2-րդ կետի համաձայն՝ ***<u>սույն որոշման պահանջները չեն տարածվում մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը սկսած</u>*** և դեռևս չավարտված ***<u>գնման գործընթացների</u>,*** ինչպես նաև կնքված և գործող պայմանագրերի **<u>վրա</u>**:

Այսպիսով, ՀՀ կառավարության 10.10.2019թ. թիվ 1422-Ն որոշումն ուժի մեջ է մտել ՀՀ ազգային անվտանգության ծառայության 2019-2020թթ. գնումների պլանը (որտեղ ներառված են «ՀՀ ԱԱԾ-ՌԲՎ-ԳՀԱՊՁԲ-20/1-ՍՏՈՄ» ծածկագրով ընթացակարգի գնման առարկա հանդիսացող ապրանքները) www.procurement.am (www.gnumner.am) կայքում հրապարակվելուց առաջ՝ 02.11.2019թ, հետևաբար՝ ՀՀ կառավարության 10.10.2019թ. թիվ

1422-Ն որոշման պահանջները տարածվում են «ՀՀ ԱԱԾ-ՌԲՎ-ԳՀԱՊՁԲ-20/1-ՍՏՈՄ» ծածկագրով ընթացակարգի վրա, քանի որ որոշման 2-րդ կետով սահմանվում է, որ սույն որոշման պահանջները չեն տարածվում մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը սկսած գնման գործընթացների վրա:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ արձանագրում եմ, որ «ՀՀ ԱԱԾ-ՌԲՎ-ԳՀԱՊՁԲ-20/1-ՍՏՈՄ» ծածկագրով ընթացակարգը պետք է հայտարարվեր 02.11.2019թ. թիվ 1422-Ն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո գործող ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի համաձայն:

Այսպիսով՝ վերը նշված հիմնավորման շրջանակներում, գտնում եմ, որ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 06.12.2019թ. ներկայացված բողոքն ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 06.12.2019թ. ներկայացված բողոքը բավարարել.

պարտավորեցնել «ՀՀ ԱԱԾ-ՌԲՎ-ԳՀԱՊՁԲ-20/1-ՍՏՈՄ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ սույն որոշման հիմնավորման շրջանակներում, «ՀՀ ԱԱԾ-ՌԲՎ-ԳՀԱՊՁԲ-20/1-ՍՏՈՄ» ծածկագրով ընթացակարգում կատարել փոփոխություն:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**